

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ ՄԱՐԶԻ 2014 Թ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ըստ կանխատեսումների 2014թ. մարզում թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը կկազմի շուրջ 148.0 մլրդ դրամ կամ նախորդ տարվա համեմատ աճը կկազմի 9% : Աճը կպայմանավորվի մշակող արդյունաբերության ոլորտում՝ շուրջ 6.0%, էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում՝ շուրջ 12% և հանքագործական արդյունաբերության ոլորտում՝ շուրջ 30% գրանցված ցուցանիշների հաշվին: Աճը կարձանագրվի հիմնականում խմիչքների (35.0%), ռետինե և պլաստմասե արտադրատեսակների (25.5%), դեղագործական ապրանքների (5.0%) արտադրության բնագավառներում:

Իսկ արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալը կկազմի շուրջ է 145.0 մլրդ դրամ կամ նախորդ տարվա համեմատ աճը կկազմի 8%:

2014թ. ընդհանուր առմամբ կարտահանվի 33.0 մլրդ դրամի արտադրանք, որից ԱՊՀ երկրներ՝ 28.0 մլրդ դրամի և այլ երկրներ՝ 5.0 մլրդ դրամի արտադրանք: Նախորդ տարվա համեմատ արտահանման ծավալը կաճի շուրջ 6.0 %-ով:

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը 2014թ. կկազմի շուրջ 40.0 մլրդ դրամ կամ նախորդ տարվա համեմատ աճը կկազմի 5.3%: Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կկազմի շուրջ 30.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճը կկազմի 6.2 %:

2014 թվականին մարզում գազի բաժանորդների քանակը կավելանա շուրջ 700–ով՝ կազմելով մոտ 62000:

2013թ. սեպտեմբերի դրությամբ զբաղվածության տարածքային 4 կենտրոններում գրանցվել է 5510 գործազուրկ, որից 3992-ը կանայք: Նախորդ տարվա հետ համեմատած զբաղվածության կենտրոններում գրանցվել են 400-ով պակաս գործազուրկներ: Աշխատանքի է տեղավորվել 650 մարդ: Մինչև տարեվերջ աշխատանքի կտեղավորվի մոտ 900 մարդ , իսկ 2014թ. համար նախատեսվում է 1100 մարդու ապահովվել աշխատանքով:

1999-2012թ. բնակարանային ապահովման նպատակով աջակցություն են ստացել մարզի գոհված և հաշմանդամ դարձած 210 անապահով զինծառայողների ընտանիքներ: 2013թ. մարզի 9 անապահով ընտանիքի տրամադրվել է ֆինանսական աջակցություն: 2014թ. նախատեսվում է ևս 30-40 ընտանիքի տրամադրել անհատույց ֆինանսական աջակցություն:

Դեռևս բնակարանի բարելավման կարիք ունեն 251 գոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքներ:

2014թ. ընթացքում մարզային և համայնքային մշակութային, մարզական միջոցառումների տարեկան ծրագրի համաձայն կկազմակերպվեն շուրջ 150 միջոցառումներ թվով 58 համայնքներում:

Սպորտի ոլորտում մարզի շուրջ 15 մարզիկներ կմասնակցեն Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում և միջազգային մրցաշարերին:

2014թ. կանխատեսումներով մարզում գյուղատնտեսական մթերքների համախառն արտադրանքի ծավալը կկազմի 54.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա դիմաց աճը կկազմի շուրջ 2.5 տոկոս: 2014թ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կկազմեն շուրջ 18000 հա, որից աշնանացան ցորեն՝ 6500 հա, գարնանացան՝ 11500 հա կամ կօգտագործվի վարելահողերի 50.0 տոկոսը: Նախորդ տարվա համեմատ ընդհանուր ցանքատարածությունները կավելանան 495 հա-ով կամ աճը կկազմի 3 տոկոս:

2014թ. հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքը կկազմի՝

Հացահատիկ- 22000 տոննա

Բանջարեղեն -23500 տոննա

Կարտոֆիլ -18200 տոննա

Պտուղ -19000 տոննա

Անասնապահությունը մարզում համարվում է առաջատար ճյուղերից մեկը, այն ավելի զարգացած է մարզի բարձրադիր համայնքներում: Մարզում արտադրվում է հանրապետության անասնապահական մթերքների 7.6 տոկոսը: Ճյուղի զարգացումը, մասնավորապես լեռնային գոտու համայնքների համար, ունի կարևորագույն նշանակություն:

Նախորդ տարվա համեմատ 2014թ. անասունների պայմանական գլխաքանակը կավելանա 1000 պայմանական գլխով, որի հետ կապված կավելանան նաև մսի, կաթի և ձվի արտադրության ծավալները՝ միս կենդանի քաշով 13250 տոննա, կաթ՝ 55000 տոննա, ձու՝ 180.0 մլն հատ:

2013-14թթ. ուսումնական տարում մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում սովորում են 27700 աշակերտներ: Առաջին դասարան է ընդունվել 3603 աշակերտ, որը նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ ավելացել է 188 աշակերտով:

Մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում են շուրջ 3000 ուսուցիչներ /վարչական աշխատողների հետ միասին շուրջ 3400/, որոնց ավելի քան 88%-ն ունեն բարձրագույն մանկավարժական, 10%-ը՝ միջին մասնագիտական, իսկ մնացածը՝ բարձրագույն կամ միջին ոչ մասնագիտական կրթություն: Լեռնային և բարձր լեռնային գոտում գտնվող ուսումնական հաստատություններում աշխատում են 1100-ը:

Ըստ 2014թ. կանխատեսումների 2013-14 ուսումնական տարվա աշխատող ուսուցիչների 20%-ը կանցնեն վերապատրաստման դասընթացներ:

Մարզի միջնակարգ ու հիմնական բոլոր դպրոցները 2014 թվականին ևս կհամալրվեն շախմատի դասավանդման համար անհրաժեշտ գույքով, դասագրքերով և ուսումնաօժանդակ նյութերով: